ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 08 ***«18» օգոստոսի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 81

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 8 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի թիվ 8 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Գլաձոր համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

3. Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրին մասնակցելու համար Հայաստանի Տարածքային Զարգացման հիմնադրամին դիմելու մասին:

4. «Քո ուղին Գլաձոր համայնքում» ծրագրի շրջանակներում ներդրում կատարելու համար թույլտվություն տալու մասին:

5. Գլաձորի համայնքապետարանի միջոցներով ձեռք բերված բազալտե սալիկները զոհվածների պանթեոնների շինարարական աշխատանքներում օգտագործելու համար թույլտվություն տալու մասին:

6. Շվեյցարիայի զարգացման գործակալության և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարության կողմից Հայաստանի համայնքներին՝ ԿՈՎԻԴ-ով պայմանավորված դժվարություններին դիմագրավելու համար հայտարարված դրամաշնորհային ծրագրին մասնակցության հայտը հաստատելու և ծրագրի շրջանակներում գումար ստանալու նպատակով արտաբյուջետային հաշիվ բացելու համար համաձայնություն տալու մասին:

7. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 9-ի թիվ 69 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

8. Գլաձոր համայնքի մի քանի բնակիչների դիմումները քննարկելու և ֆինանսական օգնություն տրամադրելու մասին:

9. Գլաձոր համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը հաստատելու մասին:

10. Համայնքապետարանին պատկանող ELAZ-BL880 մակնիշի էքսկավատորով Գլաձոր բնակավայրի դպրոցի տարածքում հիմնված ինտենսիվ այգում իրականացվող աշխատանքներն անհատույց կատարելու և օգտագործվող դիզելային վառելանյութը նվիրաբերելու համար թույլտվություն տալու մասին:

11. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի «Բելուք տեղ» կոչվող հանդամասի մայր առվի կողքը գտնվող կիսաչոր բարդիները հատելու և քամու հետևանքով Գետափ բնակավայրում կոտրված թթենին համայնքի սոցիալապես անապահով բնակչի ընտանիքի տրամադրելու համար թույլտվություն տալու մասին:

12. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող «ԹԱՎԻԹԻԱՆ ՎԻՆՅԱՐԴՍ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության վարելահողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

13. Ավել օգտագործվող հողամասի նկատմամբ քաղաքացի Արտակ Ջանիբեկի Ստեփանյանի սեփականության իրավունքը ճանաչելու և 1766.9 քառ.մ ավել օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքով վաճառելու մասին:

14. Ավել օգտագործվող հողամասի նկատմամբ քաղաքացի Ալբերտ Հրանտի Իսախանյանի սեփականության իրավունքը ճանաչելու և 1650.8 քառ.մ ավել օգտագործվող հողամասն ուղղակի վաճառքով վաճառելու մասին:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.			
Լևոնյան Վ.			
Մանասերյան Կ.			
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 08 ***«18» օգոստոսի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 82-Ն

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի 2021 թվականի հունվարի 21-ի թիվ 04-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Ավելացնել եկամտային մասին՝

«Այլ կապիտալ սուբվենցիա» հոդվածին՝ 29 900.0 /քսանինը միլիոն ինը հարյուր հազար/ ՀՀ դրամ,

«Նվիրատության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին» հոդվածին՝ 1 577.28 /մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունյոթ հազար երկու հարյուր ութսուն/ ՀՀ դրամ,

«Հողի օտարումից մուտքեր» հոդվածին՝ 15 500.0 /տասնհինգ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ,

«Այլ ոչ հարկային եկամուտ» հոդվածին՝ 2 500.0 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

2. Ավելացնել գործառնական դասակարգման՝

01.01.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4212 /Էներգետիկ ծառայություններ/ հոդվածին 2 500.0 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

04.02.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ հոդվածին 23 480.0 /քսաներեք միլիոն չորս հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ, 5129 /այլ մեքենաներ և սարքավորումներ/ հոդվածին 5 700.0 /հինգ միլիոն յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամ և 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ հոդվածին՝ 720.0 /յոթ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:

04.05.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 5112 /շենքերի և շինությունների շինարարություն/ հոդվածին՝ 14 900.0 /տասնչորս միլիոն ինը հարյուր հազար/ ՀՀ դրամ:

08.02.03 բաժնի տնտեսագիտական դասակարգման 5122 /վարչական սարքավորումներ/ հոդվածին՝ 2 177.28 /երկու միլիոն հարյուր յոթանասունյոթ հազար երկու հարյուր ութսուն/ ՀՀ դրամ:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.			
Լևոնյան Վ.			
Մանասերյան Կ.			
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 08 ***«18» օգոստոսի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 83

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 25-րդ և 42-րդ կետերի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրին մասնակցելու համար դիմել Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամին (ՀՏԶՀ)՝ համայնքի հետևյալ առաջնահերթ խնդրով.

«Գլաձոր, Գետափ և Վերնաշեն բնակավայրերում արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում և Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրում մայր առվի կառուցում, վերանորոգում»

2. Առաջարկի հաստատման դեպքում կատարել 5% ներդրում՝ ՍՆՏԶ Ծրագրի պահանջներին համապատասխան:

3. Ծրագրի իրականացման դեպքում վերականգնված ենթակառուցվածքի շահագործման և պահպանման անհրաժեշտ ծախսերը ներառել համայնքի բյուջեում:

4. Հանձնարարել համայնքապետարանի համապատասխան աշխատակիցներին պատրաստել և ՀՏԶՀ-ին ներկայացնել համապատասխան առաջարկ՝ Ծրագրին մասնակցելու վերաբերյալ:

5. Վերականգնված ենթակառուցվածքը չօտարել, չսեփականաշնորհել կամ չօգտագործել այլ նպատակներով ծրագրի ավարտից հետո 15 տարվա ընթացքում:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.			
Լևոնյան Վ.			
Մանասերյան Կ.			
Մարգարյան Ա.			

Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 08 ***«18» օգոստոսի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 84

«ՔՈ ՈՒՂԻՆ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ, 6-րդ և 42-րդ կետերի պահանջով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՄԱՁԾ «Կանայք և երիտասարդները նորարար տեղական զարգացման գործընթացներում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Գլաձոր համայնքի կողմից ներկայացված «Քո ուղին Գլաձոր համայնքում» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում համայնքի կողմից ներդրում կատարելու համար տալ թույլտվություն:

2. Սույն որոշման առաջին կետում նշված ենթադրամաշնորհի համար սահմանել համայնքային ներդրման չափը՝ մինչև 400 000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.			
Լևոնյան Վ.			
Մանասերյան Կ.			
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 08 ***«18» օգոստոսի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 85

ԳԼԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԲԱԶԱԼՏԵ ՍԱԼԻԿՆԵՐԸ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՊԱՆԹԵՈՆՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի 01.06.01 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4251 (շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածով, համաձայն Ա 1014322321 հարկային հաշվի, ձեռք բերված բազալտե ԲԱ-3 հարթեցված սալիկները թույլատրել օգտագործելու Արցախյան 44-օրյա պատերազմում Գլաձոր համայնքից զոհված զինծառայողների պանթեոնների կառուցման աշխատանքներում:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.			
Լևոնյան Վ.			
Մանասերյան Կ.			
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 08 ***«18» օգոստոսի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 86

*ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ՝ ԿՈՎԻԴ-ՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴԻՄԱԳՐԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՒՄԱՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 25-րդ, 42-րդ կետերի, 92-րդ հոդվածի 4-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասերի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Շվեյցարիայի զարգացման գործակալության և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարության կողմից Հայաստանի համայնքներին՝ ԿՈՎԻԴ-ով պայմանավորված դժվարություններին դիմագրավելու համար հայտարարված դրամաշնորհային ծրագրին Գլաձոր համայնքի մասնակցության հետևյալ հայտը. «Ավտոպարկի և վարձակալական տարածքների կառուցում»:

2. Սույն որոշման առաջին կետում նշված դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրում իրականացվելիք «Ավտոպարկի և վարձակալական տարածքների կառուցում» ծրագրով գումար ստանալու նպատակով՝ համայնքի բյուջեում (գործառնական դասակարգման 01.06.01 ոլորտ) արտաբյուջետային հաշիվ բացելու համար տալ համաձայնություն:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.			
Լևոնյան Վ.			

Մանասերյան Կ.			
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 08 ***«18» օգոստոսի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 87

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի ԹԻՎ 69 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 9-ի՝ «Գլաձոր համայնքի սեփականություն հանդիսացող որոշ հողերի գործառնական նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին» թիվ 69 որոշման իրավական ակտերին հղումներից հանել «, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի» բառերը:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.	բացակա		
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.	բացակա		
Լևոնյան Վ.	բացակա		
Մանասերյան Կ.			
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.	բացակա		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 08 ***«18» օգոստոսի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 88-Ա

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներով, քննարկելով համայնքի բնակիչներ Թամարա Էդիկի Մարգարյանի, Արթուր Միսակի Թադևոսյանի, Վարդան Ժորժիկի Հովհաննիսյանի կողմից ներկայացված դիմումները և հիմք ընդունելով Գլաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 45-Ա որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետի պահանջը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի բնակիչների կողմից ներկայացված դիմումները բավարարել և համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի 10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից տրամադրել ֆինանսական օգնություն.

1) Գլաձոր բնակավայրի բնակիչ Թամարա Էդիկի Մարգարյանին՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ,

2) Գետափ բնակավայրի բնակիչ Արթուր Միսակի Թադևոսյանին՝ 84 000 /ութսունչորս հազար/ ՀՀ դրամ,

3) Վերնաշեն բնակավայրի բնակիչ Վարդան Ժորժիկի Հովհաննիսյանին՝ 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.			
Լևոնյան Վ.			
Մանասերյան Կ.			
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			

Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 08 ***«18» օգոստոսի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 89

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը, համաձայն որի՝ Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի 18-րդ փողոցի գազատար խողովակաշարից ապամոնտաժված՝ 3.8 դյույմ տրամագծով 25.5 մ, 3 դյույմ տրամագծով 124.5 մ, 1.5 դյույմ տրամագծով 8 մետր երկաթյա խողովակները և համայնքի միջոցներով պատրաստված թվով 17 սեղաններն ու 34 աթոռները հաշվառվել են Գլաձոր համայնքի գույքային հաշվեկշռում:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.			
Լևոնյան Վ.			
Մանասերյան Կ.			
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 08 ***«18» օգոստոսի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 90

*ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ELAZ-BL880 ՄԱԿՆԻՇԻ ԷՔՍԿԱՎԱՏՈՐՈՎ ԳԼԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԴՊՐՈՑԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԻՄՆՎԱԾ ԻՆՏԵՆՍԻՎ ԱՅԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի դպրոցի տարածքում հիմնված ինտենսիվ այգում համայնքին պատկանող ELAZ-BL880 մակնիշի էքսկավատորով 2021 թվականին իրականացվող 4-րդ կարգի գրունտի հարթեցման, տեղափոխման աշխատանքներն անհատույց կատարելու և օգտագործվող դիզելային վառելանյութը Գլաձոր բնակավայրի դպրոցին նվիրաբերելու համար տալ թույլտվություն:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.			
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.			
Լևոնյան Վ.			
Մանասերյան Կ.			
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 08

«18» օգոստոսի 2021թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 91-Ա

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ «ԲԵԼՈՒՔ ՏԵՂ» ԿՈՉՎՈՂ ՀԱՆԴԱՄԱՍԻ ՄԱՅՐ ԱՌՎԻ ԿՈՂՔԸ ԳՏՆՎՈՂ ԿԻՍԱՉՈՐ ԲԱՐԴԻՆԵՐԸ ՀԱՏԵԼՈՒ ԵՎ ՔԱՄՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿՈՏՐՎԱԾ ԹԹԵՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿՉԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջով և հիմք ընդունելով Գետափ բնակավայրի վարչական ղեկավարի դիմումը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ թույլտվություն.

1. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի «Բելուք տեղ» կոչվող հանդամասի մայր առվի կողքը գտնվող 2/երկու/ կիսաչոր բարդիները հատելու համար, քանի որ նշված բարդիները թեքվել են դեպի մայր առվի վաքերը, իրենցից վտանգ են ներկայացնում և ուժեղ քամիների ժամանակ կարող են կոտրվել՝ վնասելով վաքերը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված բարդիները հատելուց հետո, որպես վառելափայտ, տրամադրել Արցախի Հանրապետությունից տեղահանված և Գետափ բնակավայրում բնակվող Արսեն Բայաթյանի ընտանիքին:

3. 2021 թվականի օգոստոսի 7-ին, ուժեղ քամու հետևանքով, Գետափ բնակավայրում, Մ 10 միջպետական նշանակության ավտոճանապարհի հարակից համայնքային սեփականություն հանդիսացող հողամասից կոտրված թթենին, որպես վառելափայտ, տրամադրել Գետափ բնակավայրի բնակիչ Քնարիկ Հարությունյանի ընտանիքին:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.	բացակա		
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.	բացակա		
Լևոնյան Վ.	բացակա		
Մանասերյան Կ.			

Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 08 ***«18» օգոստոսի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 92

ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ԹԱՎԻԹԻԱՆ ՎԻՆՅԱՐԴՍ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 17-րդ կետի պահանջը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 10-ի N 176 և N 177 դրական եզրակացությունները՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, «ԹԱՎԻԹԻԱՆ ՎԻՆՅԱՐԴՍ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 6 հա վարելահողից /կադաստրային ծածկագիր՝ 10-014-0138-0002/ 2.62518 հա փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման (մշակույթի կենտրոն կառուցելու համար):

2. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, «ԹԱՎԻԹԻԱՆ ՎԻՆՅԱՐԴՍ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 15 հա վարելահողից /կադաստրային ծածկագիր՝ 10-014-0134-0001/ 2.6959 հա փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման (հյուրանոց կառուցելու համար):

3. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «ԹԱՎԻԹԻԱՆ ՎԻՆՅԱՐԴՍ» ՍՊԸ-ի կողմից հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ դիմումներն

ընդունվել են մինչև 2020 թվականի դեկտեմբերի 15-ը՝ հողամասերի կադաստրային արժեքների տարբերության հաշվարկը կատարել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը գործող կադաստրային արժեքներով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակության փոփոխությունից առաջացած կադաստրային արժեքների տարբերության արդյունքում, «ԹԱՎԻԹԻԱՆ ՎԻՆՅԱՐԴՍ» ՍՊԸ-ի կողմից, համայնքային բյուջե պետք է վճարվի 8 236 500 /ութ միլիոն երկու հարյուր երեսունվեց հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, իսկ 2-րդ կետում նշված հողամասի նպատակային նշանակություն փոփոխության արդյունքում՝ 8 606 660 /ութ միլիոն վեց հարյուր վեց հազար վեց հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ:

5. Սույն որոշման 4-րդ կետում նշված կադաստրային արժեքների տարբերության գումարը կփոխանցվի Գլաձորի համայնքապետարանի 900355109126 հաշվեհամարին:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.	բացակա		
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.	բացակա		
Լևոնյան Վ.	բացակա		
Մանասերյան Կ.			
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.	բացակա		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 08 ***«18» օգոստոսի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 93-Ա

ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏԱԿ ՋԱՆԻԲԵԿԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 1766.9 ՔԱՌ.Մ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճանաչել քաղաքացի Արտակ Ջանիբեկի Ստեփանյանի սեփականության իրավունքը Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրում գտնվող, հողաբաժնի չափից ավել օգտագործվող 2066.9 քառ.մ վարելահողի նկատմամբ:
2. Սեփականաշնորհման չափի 20 տոկոսից ավել օգտագործվող 1766.9 քառ.մ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքով օտարել քաղաքացի Արտակ Ջանիբեկի Ստեփանյանին:
3. 1766.9 քառ.մ մակերեսով հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել 18 560 /տասնութ հազար հինգ հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ՝ կադաստրային արժեքի 30 տոկոսը:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.	բացակա		
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.	բացակա		
Լևոնյան Վ.	բացակա		
Մանասերյան Կ.			
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.	բացակա		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հեռ. (0281) 2-22-80, (0281)2-34-46 Գլաձոր համայնք, 33փող, 41 շենք

Նիստ թիվ 08 ***«18» օգոստոսի 2021թ.***

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 94-Ա

ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԱԼԲԵՐՏ ՀՐԱՆՏԻ ԻՍԱԽԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 1650.8 ՔԱՌ.Մ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճանաչել քաղաքացի Ալբերտ Հրանտի Իսախանյանի սեփականության իրավունքը Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրում գտնվող, հողաբաժնի չափից ավել օգտագործվող 2130.8 քառ.մ վարելահողի նկատմամբ:

2. Սեփականաշնորհման չափի 20 տոկոսից ավել օգտագործվող 1650.8 քառ.մ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքով օտարել քաղաքացի Ալբերտ Հրանտի Իսախանյանին:

3. 1650.8 քառ.մ մակերեսով հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել 17 340 /տասնյոթ հազար երեք հարյուր քառասուն/ ՀՀ դրամ՝ կադաստրային արժեքի 30 տոկոսը:

Ավագանիներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գաբրիելյան Ա.	բացակա		
Գասպարյան Ք.			
Գևորգյան Ա.	բացակա		
Լևոնյան Վ.	բացակա		
Մանասերյան Կ.			
Մարգարյան Ա.			
Մարգարյան Գ.			
Մարտիրոսյան Մ.			
Սարգսյան Է.			
Սաֆարյան Ե.			
Վարդանյան Գ.	բացակա		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ